ձին դուրգուրանքի եւ յարգանքի առարկայ։ «Սեւանայ լճի առաջին մօթօրային նաւակի երթեւեկութիւնը...չինարարական աշխատութիւն»...

Ու մօթօրը նաղ է անում եւ փսթփսթում։ Փսթփսթում է անծայրի եւ անդնդացած լռութեան առջեւ, հիւանդ ծիտի նման։

Կղզու մօտ նաւակը պեղում է մի քանի ծառերի արտացոլուող պատկերը եւ կանգ է առնում փայտէ մի կամուրջի առջեւ։ Իջնում ենք։ Ամէնքի շրթունքները փակ են։ Օդը կլանում է բոլոր բառերը, ու լռութիւնը ըղէղի նման թեւերը զարկում է անհունին եւ վայր ընկնում։

Սեւանայ կղզին բնութեան հրաշակերտ մի վայր չէ։ Նա կանանչ պատմուճանի տակ կորած, սուտակի եւ լաջուրի վրայ նստած, դալուկ եւ փառահեղ թագուհի չէ, կամ կատաղի ծովերի մէջ ընկած վայրենի ժայռերի կուտակում չէ. նա գրեթէ անմարմին, ոգեղենացած սուրբի մի դէմք է, որի առջեւ աննշմարելի տենդոտ աչքեր պաղատանք են պտտցընում, եւ ալիքները տաղ են արտասանում։

Խոնարհ մի չէնք, եկեղեցի։ Վերը, պատող կածանի ծայրին ուրիշ մի եկեղեցի ու մի քանի քայլ անդին նորից մի եկեղեցի։

Խարխուլ, քարը քարից բաժանուած մատուռի մէջ սանդուխտաւոր սեղանը, կէս այրուած պատկերներ եւ ամէն տեղ թափուած մոմ։ Սրբազնացութեան քանդուած մեր եկեղեցիները ինչքա՜ն մենակեաց են, ինչքա՜ն խոնարհ եւ սրբազան։ Զմեռը մրրիկը բաց դռնից եւ ճեղքուած տանիքից ներս է խուժում ու՝ դլուխը պատերին զարնելով՝ ամեհի իր աղօթքները ասում. ձիւնը իր կուրծքը կպցնում է պատերին եւ սառը մատներով շոյում է նկարուած սրբերի դէմքերը. զրահաւորուած քամիները իջնում են այստեղ եւ դիւցազնական մեծ վէճերի են բռնում։ Իսկ գարունը, կարմիր վարսերը վայր թափած, ծնկաչոք տառապում է, բուրումնաւէտ խօսքեր է ասում, սանդուխի աստիճանների վրայ մելամաղձոտ վարդեր է սփռում եւ կապոյտ բոցեր։

Բախտաւո՛ր անապատականներ, որ գիտեն այդ լեզուն հասկանալ։ Բարդ, երկրի խորքից եւ երկնքի անծայրից բխող լեզու, որի քերականութիւնը գրուած է մարդ չի իմանում ո՞ւր եւ սակայն ամէն տեղ է, բոլոր լեռների կատարին, դաշտերի վրայ եւ սրտերի մէջ։

Ամայի այդ սեղանի առջեւ մնացել եմ մինակ։ Միամիտ պատկերները նայում են բոցակիզուած բիբերով։ Խոնաւութեան մէջ ահաւոր մի տխրութիւն խոր մի հոր է փորել։ Քարերի մէջից շաղախը թափուել է, եւ նրա տեղ լոյս է նստել։ Կարծես ամբողջ ծանրութիւնը ճառագայթների վրայ է յենուած։

Գլխիս մէջ անորոշ տողեր են երգում, բայց պատկերների նուշանման աչքերի մէջ թառած վախը ինձ էլ է լեցնում, ու մեղեդին փչրուում է ալիքի նման։

Այստեղ ուխտաւորները ոչխար եւ եզ են մորթում։

Ոչխարի եղջիւրներից բռնած քաշում են ներս, բերում սեղանի առջեւ, բերանը բաց անում եւ մի բուռ աղ տալիս։ Փիչ յետոյ, դըրսում, մեծ դանակներով կտրում են կոկորդը եւ, երբ հողը ըմպում է արիւնը, թաւուլ եւ զուռնայի ձայն է լսւում եւ զոհը պարում է ինքը իր շուրջը։

Զոհաբերութեան վրայ։ Արիւն, աղօթք եւ զուռնա։ Եւ յետոյ, խոր, անըմբռնելի մինակութիւն ամբողջ տարին։

Ես հասկանում եմ աստուածութեան ծոտենալու այս կերպը, ոգիմպական երկրպագութեան այդ ձեւը, ողբերգական այդ գործողութիւնը։ Հայ ժողովուրդը ամենադրամատիկ ժողովուրդն է աշխարհիս երեսին. նա զոհ է եւ զոհաբերող, երգ եւ մինակութիւն, հեթանոս եւ քրիստոնեայ, բնական վերին աստիճանի։

Բնական, այսինքն՝ տիեզերական։ Եւ ինչպէ՞ս է, որ մենք, արդի հայերս, ցուպը ձեռքերնիս լեռնէ լեռ չենք ընկած, ձորէ ձոր, դաշտէ դաշտ չենք դացած, մեր աստուածները որոնելու համար, որպէսզի արիւնի, աղօթքի եւ միայնութեան տիեզերական խմաստը մեր հոգիների միջից քաղենք։

* * *

Սեւանայ կղզին վառ է ներքին, ներուժ երաժշտութեամբ։ Նա բարձրացել է լերան կատարը, նստել լայնածաւալ հայելիի մէջ, որպէսզի Հայաստանի սանդխտաւոր վերելքը իր բազուկները մխրճի երկնքի մէջ։ Ա՜հ, Սե-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան